ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 4 » հոկտեմբերի 2024 թվականի N: 465-Ա ք. Գյումրի

ՆՎԵՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՀԱՅԿԱՍԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի քննչական առաջին վարչության հատկապես կարևորագույն գործերով ավագ քննիչ Արման Խաչատրյանի 2024 թվականի սեպտեմբերի 26-ի որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Պաշտոնավարման կասեցումը խափանման միջոց կիրառելու կապակցությամբ կասեցնել Նվեր Խաչատրյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի լիազորությունները:

2. Կասեցման պահից մինչև պաշտոնավարման կասեցման վերացումը Նվեր Խաչատրյանի վարձատրությունը չպահպանել:

3. Նվեր Խաչատրյանի բացակայության ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի

գործառույթների իրականացումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Անժելա Մանուկյանին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝